## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 1

### ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ27 N 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» հայաստանի Հանրապետության Հանրպետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով.

Ավագանին որոշեց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 27-ի N1 արտահերտ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ

ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 1 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1.ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

/ԶԵԿ. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

4.ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

5.ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՂԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

Ավագանու անդամներ

Արմեն Խաչատրյան

Արտակ Հերիքյան

Տիգրան Սարգսյան

Ավագ Միքայելյան

Լևոն Թադևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 2-Ն

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 10.1 կետով,12-րդ,16-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Որոշում է

1.Հաստատել Արմավիրի մարզի Տանձուտ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Հ Հ Արմավիրի մարզի Տանձուտի համայնքի
ավագանու 2016 թվականի հունվարի 28-ի
թիվ 2-Ն որոշման

КАРԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքում Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության հետ կապված հարաբերությունները:
2. Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը համայնքում իրականացվող գործընթաց է, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղակի կամ անուղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա: Համայնքում տեղական ինքնակառավարման մասնակցելու իրավունք ունի համայնքի 16 տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:
3. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Տեղական Ինքնակառավարման մասին» Հ Հ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում: Համայնքի բնակիչների, նրանց խմբերի տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են «Տեղական Ինքնակառավարման մասին» Հ Հ օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ինչպես նաև սույն կարգով:
4. Համայնքի ղեկավարը
   1) Համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց ( այդ թվում տեղեկատվության և հեռահաղորդակցության).
   2) Ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժունը խմբերի համար.

3) Կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի , քաղաքաշինական,բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին.

4) Համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և ներգրավում է համայնքի տարածքումկազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում.

5. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը.

1) Կազմակերպում և ապահովում է աշխատակազմի աջակցությունն համայնքի բնակիչների նախաձեռնությամբ համայնքի ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը

2) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.

3) Համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված «Տեղական Ինքնակառավարման մասին» Հ Հ օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կարգով

6. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ( կազմման, հանրային քննարկման իրականացման և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ:

Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի. բյուջեի տարեկան հաշվետվության նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը առնվազն 15 օր առաջ կազմակերպում և անցկացնում է բաց լսումներ և քննարկումներ:Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված

դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն :

Խորհրդակցական մարմնի գործունեության կարգը, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանու տեղեկատվություն տրամադրելու կարգը սահմանում է համայնքի ավագանին:

7. Համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած բնակիչները կարող են հանդես գալ համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց կամ հարցեր (այսուհետ հարց) ընդգրկելու նախաձեռնությամբ:

Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են համայնքի դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին : Համայնքի բնակիչների նախաձեռնությունը պարտադիր կարգով ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և «Տեղական Ինքնակառավարման մասին» Հ Հ օրենքով, սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում` դրա հերթական քննարկումից առնվազն վեց ամիս հետո : Համայնքի բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը` որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:

Հարցերի հեղինակները պետք է ներկայացնեն որոշման նախագծեր: Յուրաքանչյուր նախագծին կցվում են դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումները և յուրաքանչյուր որոշման նախագծի իրականացման ֆինանսական ծախսերի նախահաշիվները:

8. Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության համար համայնքի բնակիչները պետք է ձևավորեն առնվազն հինգ բնակիչներից կազմված նախաձեռնող խումբ:

9. Նախաձեռնող խումբը համայնքի ղեկավարին ուղղված և իր բոլոր անդամների ստորագրած դիմումին կից ներկայացնում է`

   1) Ավագանու նիստի օրակարգում ընդգրկվելիք հարցի բովանդակությանը և ավագանու որոշման նախագիծը.

   2) Իր անդամներին և ավագանու նիստում նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչի ստորագրություններ հավաքող լիազոր ներկայացուցիչների ազգանունը, անունը ծննդյան թիվը բնակության և աշխատանքի վայրը , կուսակցական պատկանելիությունը անձնագրային տվյալները:

10. Նախաձեռնող խմբի դիմումը ստանալու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում համայնքի ղեկավարը ստուգում է այդ դիմումի ու դրան կից ներկայացված փաստաթղթերի

օրինականությունը և որոշում է ընդունում նախաձեռնող խումբը գրանցելու կամ նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու մասին:

11 Եթե առաջարկվող որոշման նախագիծը չի համապատասխանում Հ.Հ գործող օրենսդրության պահանջներին, ապա նախաձեռնող խմբի առաջարկությամբ կամ համաձայնությամբ համայնքի ղեկավարը մինչև նախաձեռնող խմբին գրանցելու վերաբերյալ որոշում ընդունելը, կարող է փոփոխել այդ նախագծի ձևակերպումը պահպանելով դրա հիմնական բովանդակությունը:

12 Եթե համայնքի ղեկավարը որոշում է ընդունում նախաձեռնող խմբին գրանցելու մասին , ապա նա վերջինիս լիազոր ներկայացուցչին հանձնում է նախաձեռնող խումբը գրանցելու և ստորագրահավաքի օրինականությունը ստուգող հանձնաժողովի կազմի մասին իր որոշումը, ավագանու նիստում քննարկման դնելու համար առաջարկվող որոշման նախագիծը և նախաձեռնությունը պաշտպանելու համար ստորագրահավաքի պաշտոնաթերթիկները:

Հանձնաժողովը կազմվում է հետևյալ հարաբերակցությամբ

1) Մեկ երրորդը՝ գյուղապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ

2) Մեկ երրորդը՝ նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչներ

3) Մեկ երրորդը՝ ավագանու անդամներ

13. Եթե համայնքի ղեկավարը որոշում է ընդունում նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու մասին,ապա նա այդ որոշման մեջ նշում է մերժման հիմքերը և երկու աշխատանքային օրվա ընթացքում դա պաշտոնապես հանձնում է նախաձեռնող խմբին:

14. Նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու համար հիմք կարող է լինել միայն նախաձեռնող խմբի կողմից Հ.Հ գործող օրենսդրության և սույն կարգի պահանջների խախտումը: Նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

15. Պաշտոնաթերթիկը ավագանու նիստում քննարկման դնելու համար առաջարկվող որոշման նախագծի նախաձեռնության պաշտպանության նպատակով համայնքի հաշվառում և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ստորագրությունները հավաքելու համար նախատեսված համարակալված գրքույկ է, որը յուրաքանչյուր էջը պատրաստվում է սույն կարգի 32-րդ կետով սահմանված ձևով:

16. Մինչև ստորագրություններ հավաքելու գործընթացը սկսելը պաշտոնաթերթիկում նշվում են համայնքի անվանումը և համայնքի ավագանու քննարկմանը դնելու համար առաջարկվող որոշման նախագծի անվանումը: Պաշտոնաթերթիկում ստորագրություններ հավաքող անձինք պարտավոր են ստորագրող քաղաքացու առաջին իսկ պահանջով նրան ներկայացնել ավագանուն առաջարկվող որոշման նախագիծը և նախաձեռնող խմբի գրանցման մասին համայնքի ղեկավարի որոշումը: Պաշտոնաթերթիկում համայնքի յուրաքանչյուր բնակիչ ստորագրում է անձամբ:

17. Նախաձեռնող խումբը ստորագրություններ հավաքելու գործընթացը կազմակերպում է համայնքի ղեկավարից պաշտոնաթերթիկն ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում: Եթե պաշտոնաթերթիկն ստանալուց հետո տաս օրվա ընթացքում այն անհրաժեշտ թվով ստորագրություններով չի հանձնվում համայնքի գյուղապետարանի աշխատակազ, ապա ստորագրություններ հավաքելու գործընթացը դադարում է, իսկ նախաձեռնությունը . համարվում է ավարտված:

18. Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության համար անհրաժեշտ ստորագրությունների նվազագույն քանակը համայնքում հաշվառված, 16 տարին լրացած անձանց ընդհանուր թվի 2 տոկոսից պակաս չպետք է լինի:

19. Պաշտոնաթերթիկում ստորագրություններ կարող են հավաքվել համայնքի ամբողջ տարածքում առանց որևէ համամասնության սահմանման: Պաշտոնաթերթիկում ստորագրություններ հավաքելու գործընթացն իրականացվում է այն վայրերում, որտեղ օրենքով արգելված չէ քարոզչություն անելը և ստորագրություններ հավաքելը:

20. Պաշտոնաթերթիկում ստորագրություններ հավաքելու նպատակով արգելվում է անձամբ կամ որևէ այլ եղանակով համայնքի բնակիչներին դրամ, արժեթղթեր, սննդամթերք ապրանքներ տալը կամ անհատույց ծառայություններ մատուցելը: Արգելվում է պաշտոնաթերթիկում ստորագրություններ հավաքել աշխատավարձի, թոշակի և նպաստի վճարման ընդացքում և վայրում:

21. Պաշտոնաթերթիկում ստորագրություններ հավաքելու գործընթացի ավարտից հետո, բայց ոչ ուշ քան պաշտոնաթերթիկը ստանալուց հետո 10 օրվանից հետո , նախաձեռնող խումբը հաշվում է պաշտոնաթերթիկում առկա ստորագրահավաքին մասնակցած անձանց ստորագրությունների ընդանուր թիվը և կազմում է ամփոփիչ արձանագրություն, որտեղ նշվում են նախաձեռնող խմբի գրանցման տարեթիվը, ամսավիվը, ստորագրություններ հավաքելու գործընթացն ավարտելու տարեթիվը, ամսաթիվը և հավաքված ստորագրությունների ընդհանուր թիվը ու համայնքի գյուղապետարանի աշխատակազմ է հանձնվում սահմանված կարգով կազմված պաշտոնաթերթիկը և նախաձեռնող խմբի ամփոփիչ արձանագրության օրինակը: Պաշտոնաթերթիկը ընդունելիս գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը կամ նրան փոխարինող անձը հաշվում է հավաքված ստորագրությունների ընդհանուր թիվը և պաշտոնաթերթիկը հանձնող լիազորված անձին տալիս է ստացական:

22. Գյուղապետարանի աշխատակազմում պաշտոնաթերթիկն ստանալուց հետո աշխատանքային օրվա ընթացքում գյուղապետարանի աշխատակազմի, ավագանու անդամներից նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովն ստուգում է դրա օրինականությունը, ինչպես նաև հավաքված ստորագրությունների վավերականությունը: Նշված ստուգումն իրականացնելու համար

հանձնաժողովի որոշմամբ հանձնաժողովի անդամների թվից կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր, որոնց եզրակացությունները կարող են հիմք լինել հավաքված ստորագրություններն անվավեր ճանաչելու համար:

23. Ստորագրությունների վավերականությունները ճշտվում է ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության համար անհրաժեշտ ստորագրությունների ընդհանուր թվի ոչ պակաս քան 50 տոկոսի ընտրանքային ստուգման միջոցով:

24. Ընտրանքային կարգով ստորագրություններն ստուգելու նպատակով հանձնաժողովը՝

1) Վիճակահանությամբ արձանագրում է ստուգման ենթակա ստորագրությունների համարները:

2)Ստուգման արդյունքում հայտնաբերված անվավեր ստորագրությունների մասին ստորագրությունների համարները և համապատասխան քաղաքացիների մասին տվյալները:

3) Ստուգված ստորագրությունների ընդհանուր թվի վավեր և անվավեր ստորագրությունների հարաբերակցությունը համամասնորեն բաժանում է ստորագրությունների թվի վրա ստանալով ստորագրությունների ընդհանուր թվում վավեր և անվավեր ստորագրությունների քանակը:

4)Ստուգման արդյունքերի մասին կազմվում է արձանագրություն

25. Ստուգման և հաշվառման ենթակա չեն պաշտոնաթերթիկում այն ստորագրությունները,որոնք մինչև պաշտոնաթերթիկները գյուղապետարանի աշխատակազմ ներկայացնելը նախաձեռնող խմբի լիազորած ներկայացուցիչը հատուկ նշումով հանել է :

26. Եթե ընտրանքային կարգով ստուգման ժամանակ հայտնաբերվում է միևնույն անձին պատկանող մի քանի ստորագրություն, ապա վավեր է համարվում դրանցից միայն մեկը:

27. Անվավեր են համարվում

1) Համայնքի տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք չունեցող անձանց ստորագրությունները, ինչպես նաև հանձնաժողովի աշխատանքներում ներգրավված անձանց եզրակացության հիման վրա պաշտոնաթերթիկում անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տվյալներով ստորագրությունները.

2) Սույն կարգով պահանջվող տվյալների բացակայությամբ ստորագրությունները.

3) Համայնքի տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք ունեցող անձի կամ պաշտոնաթերթիկը վավերացնող անձի ստորագրության ամսաթվի փոփոխություններով ստորագրությունը, եթե այդ փոփոխության պատճառը ստորագրողը գրավոր չի ներկայացնում

4) Մատիտով կատարված ստորագրությունները

5) Սույն կարգի 20-րդ կետի հիման վրա ուժը կորցրած համարված ստորագրուությունները

6) Այն ստորագրությունները,որոնք համայնքիտեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք ունեցող անձը պաշտոնաթերթիկում անձամբ չի ստորագրել, և նշավ հանգամանքը փաստացի պարզվել է համայնքի տեղական ինքնակառավարմանը

մասնակցելու իրավունք ունեցող անձի կողմից հանձնաժողով ներկայացված գրավոր հավաստիացմամբ

7) Սույն կարգի 26-րդ կետում նախատեսված դեպքում՝ մյուս բոլոր ստորագրությունները “

28. Ստորագրությունների ստուգման արդյունքում հանձնաժողովը ընդունում է որոշում:

29. Եթե ստորագրությունների հավաքման ընդացքում խախտվել է սույն կարգով սահմանված կարգը, կամ նախաձեռնող խմբի ներկայացրած վավեր ստրագրությունների քանակը չի համապատասխանում օրենքով և սույն կարգով անհրաժեշտ թվին, ապա հանձնաժողովը ընդունում է ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը մերժելու մասին որոշում,որի պատճենը դրա ընդունման օրվանից 2 աշխատանքային օրվա ընդացքում ուղարկվում է նախաձեռնող խմբին:Նշված որոշման ընդունման օրվանից 2 տարվա ընդացքում տվյալ նախաձեռնող խմբի անդամները չեն կարող հանդես գալ համայնքի տեղական ինքնակառավարմանը մասնակցելու նախաձեռնությամբ:

30. Եթե ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության իրականացման ընթացքը համապատասխանում է սույն կարգի պահանջներին ,ապա հանձնաժողովը ընդունում է ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության մասին որոշու, որի պատճենը և ներկայացված պաշտոնաթերթիկները ներկայացնում է համայնքի ղեկավարին: Հանձնաժողովն իր որոշման պատճենն ուղարկում է նաև նախաձեռնող խմբին:

31. Հանձնաժողովից ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության փաստաթղթերը ստանալուց հետո համայնքի ղեկավարը 10 օրյա ժամկետում հրավիրում է ավագանու նիստ և նիստում քննարկվում է համայնքի բնակիչների նախաձեռնությունը:

32. Պաշտոնաթերթիկի էջի ձևը:

Ավագավու անդամներ՝

Արմեն Խաչատրյան

Արտակ Հերիքյան

Տիգրան Սարգսյան

Ավագ Միքայելյան

Լևոն Թադևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 3-Ն

### ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ,ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը .

Որոշում է՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համյանքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը,անվանումները ,ձևավորման և գործունեության կարգը 'համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի
Ավագանու 2016 թվականի [illegible] 27-ի
N 3-Ն որոշման

# ԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Հայկական համայնքում տեղական ինքնակառավարման համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, հանրության մասնակցությունն ու իրազեկումը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը ապահովելու նպատակով Տանձուտ համայնքի ղեկավարին (այսուհետ՝ համայնքի ղեկավարին) կից ստեղծվում և գործում են խորհրդակցական մարմիններ (այսուհետ՝ Խորհուրդ):
2. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կարգի հիման վրա:
3. Խորհրդի խնդիրներն են.
   1) համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների ներգրավմամբ տվյալ ոլորտում հանրային կարևորության խնդիրների վերահանումը, դրանց վերաբերյալ կարծիքի (առաջարկ եզրակացություն) տրամադրումը համայնքի ղեկավարին:
   2) համայնքի բնակիչների, քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների, միավորումների առաջարկությունների ուսումնասիրումը, քննարկումը և դրանց վերլուծության հիման վրա կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը համայնքի ղեկավարին:
   3) տվյալ ոլորտի կառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը:
4. Համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում են հետևյալ Խորհուրդները.
   1) համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման,
   2) համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվողփոփոխությունների,
   3) համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների:
5. Խորհուրդը ձևավորվում է մինչև 7 անդամի կազմով, իսկ համայնքի զարգացման քառամյա ծրագրերի և տարեկան բյուջեի կառավարման Խորհուրդը՝ մինչև 9 անդամի կազմով:
6. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Խորհրդի անդամներին իր որոշմամբ նշանակում է համայնքի ավագանին՝ աշխատակազմի, համայնքային հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ), ընդ որում՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման Խորհրդի կազմում ներգրավում են նաև.
   1) առավելագույնը համայնքի ավագանու 3 անդամ՝ վերջիններիս համաձայնությամբ,
   2) մինչև երեք փորձագետ՝ տվյալ բնագավառի մասնագիտական գիտելիքներ և բարձր որակավորում ունեցող, ցանկալի է հայտնի ու հեղինակություն վայելող այն անձանցից, որոնք չեն աշխատում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ դրանց ենթակայության կազմակերպություններում և նախապես հայտնել են իրենց համաձայնությունը:
7. Հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգռու անձնաց նշանակումը Խորհրդի կազմում կատարվում է իրենց դիմումի համաձայն՝ հրապարակային հայտարարության հիման վրա, ըստ հայտերի ներկայացման հաջորդականության՝ մինչև սույն

կարգով սահմանված անդամների առավելագույն քանակը լրանալը, ընդ որում՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի կազմում համայնքի բնակիչները ներգրավվում են յուրաքանչյուր թաղամասից մեկ բնակիչ (հնարավորության դեպքում):

8. Խորհուրդը ձևավորված է համարվում , եթե նշանակվել են տվյալ խորհրդի առնվազն 7 անդամ, իսկ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը ՝ եթե նշանակվել են առնվազն 9 անդամ:
9. Խորհրդի աշխատանքները իրականացվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են խորհրդի նախագահի կողմից:
10. Խորհուրդը նախագահում է համայնքի ղեկավարը, որը նշանակում է խորհրդի նախագահի տեղակալին և քարտուղարին:

Խորհրդի նախագահի տեղակալ կարող է լինել համայնքի ղեկավարի տեղակալը կամ համայնքի ղեկավարի խորհրդականը կամ օգնականը կամ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը, իսկ քարտուղար՝ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը կամ աշխատակիցը:

11. Խորհուրդն իր նիստերը կազմակերպում է 1 փողոց 38 շենք հասցեում գտնվող համայնքի գյուղապետարանի վարչական շենքում, եթե համայնքի ղեկավարի կողմից այլ որոշում չի ընդունվել:
12. Խորհրդի նախագահի որոշմամբ Խորհրդի նիստերին, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև այլ անձինք (հրավիրվածներ), ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:
13. Խորհրդի բնականոն գործունեությունն ապահովում է համայնքի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:
14. Խորհրդի նախագահն իրականացնում է Խորհրդի գործունեության ընդհանուր ղեկավարումը:
15. Խորհրդի նախագահը ՝
    1) հաստատում է Խորհրդի նիստի օրակարգը,
    2) հրավիրում է Խորհրդի նիստերը,
    3) կազմակերպում է Խորհրդի գործունեությունը և ղեկավարում դրա աշխատանքը,
    4) ստորագրում է Խորհրդի նիստի արձանագրությունը:
16. Խորհրդի նախագահի տեղակալը փոխարինում է Խորհրդի նախագահին նրա բացակայության ժամանակ:
17. Խորհրդի քարտուղարը՝
    1) կազմում է նիստի օրակարգը և ներկայացնում Խորհրդի նախագահի հաստատմանը,
    2) իրականացնում է նիստերի օրակարգում ընդգրկված հարցերի նախապատրաստումը, ապահովում է մասնակիցների ներկայությունը,
    3) պատասխանատվություն է կրում ներկայացվող նյութերի ամբողջականության համար,
    4) վարում է Խորհրդի գործավարությունը, այդ թվում՝ նիստի արձանագրության կազմումը:
18. Խորհրդի անդամը նախագահողի կողմից կարող է հեռացվել խորհրդի տվյալ նիստից խորհրդի նիստի աշխատանքները խոչընդոտելու դեպքում, մասնավորապես եթե.
    1) 2 անգամից ավելի թույլ չի տալիս Խորհրդի մյուս անդամներին ազատորեն արտահայտել իրենց կարծիքը քննարկելու հարցի վերաբերյալ և (կամ) խոչընդոտում խորհրդի անդամի ելույթը,
    2) առանց ձայնի իրավունք ստանալու 2 անգամից ավելի արտահայտում է իր կարծիքը,
    3) որևէ այլ կերպ խոչընդոտում է Խորհրդի նիստի բնականոն ընթացքը:
19. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:
20. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են նշանակված անդամների առնվազն կեսը:
21. Խորհրդի որոշումներն ընդունվում են եզրակացությունների և առաջարկությունների ձևով և կրում են խորհրդատվական բնույթ:
22. Խորհրդի անդամներն անձամբ մասնակցում են Խորհրդի նիստերին:

23. Խորհուրդն՝ ընդհանրական կարծիքի ձևավորման համար, քննարկվող հարցերի շուրջ որոշումներ է ընդունում բաց քվերակությամբ՝ ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս քան Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելիի կողմից ընդունվելու դեպքում:

24. Խորհրդի քարտուղարը մշակում և կազմում է նիստի օրակարգը՝ համաձայնեցնելով Խորհրդի նախագահի հետ:

25. Խորհրդի նիստի օրակարգը Խորհրդի քարտուղարը ներկայացնում է Խորհրդի անդամներին՝ նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

26. Օրակարգում կարող են մտցվել լրացուցիչ հարցեր՝ համայնքի ղեկավարի կողմից:

27. Խորհրդի անդամն իրավունք ունի օրակարգ մտցնել լրացուցիչ հարցեր, եթե դրանք ընդունվում են քվերակությամբ՝ տվյալ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

28. Խորհրդի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է համայնքի գյուղապետարանի վարչական շենքում կամ համայնքի գյուղապետարանի պաշտոնական համացանցային կայքում (հնարավորության դեպքում): Խորհրդի ընդունած եզրակացություններն ու առաջարկությունները հրապարակվում են ամբողջությամբ:

29. Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից:

30. Խորհրդի անդամ չեն կարող լինել՝
   1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,
   2) հանցագործության համար դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

31. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են տվյալ անձին համապատասխան Խորհրդի կողմից հանելու մասին համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե Խորհրդի անդամը՝
   1) դիմում է ներկայացրել Խորհրդից դուրս գալու վերաբերյալ,
   2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
   3) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել Խորհրդի նիստերի աշխատանքին,
   4) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել նրա լիազորությունների իրականացմանը Խորհրդում,
   5) Նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ,
   6) Նա մահացել է,
   7) Անձը դադարել է ավագանու անդամ լինելուց:

Ավագանու անդամներ՝

Արմեն Խաչատրյան

Արտակ Հերիքյան

Տիգրան Սարգսյան

Ավագ Միքայելյան

Լևոն Թադևոսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2016 թվականի N 4-Ն

### ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով.

Որոշում է

1.Հաստատել Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման և անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի

Ավագանու 2016 թվականի հունվարի 27-ի

թիվ 4-Ն որոշման

# ԿԱՐԳԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Տանձուտ համայնքի ղեկավարին (այսուհետև՝ համայնքի ղեկավար) վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի հետ կապված հարաբերությունները:
2. Համայնքի ղեկավարը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով վերապահված հետևյալ կամավոր լիազորությունն:

Պաշտպանության կազմակերպման բնագավառում՝

1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.
2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման , ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.
3) Աջակցում է բնակչության , հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝

1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.
2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները.
3) կազմում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.
4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.
5) կազմակեպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

Հողօգտագործման բնագավառում՝

1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.
2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:

Տրանսպորտի բնագավառում՝

1) կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների , կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում՝

1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործության զարգացմանը.
2) աջակցում է համայնքի տարածքում պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.
3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.
4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.
5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում՝

1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.
2) աջակցում է առողջապահական մարմինների ՝ սանիտարահիգենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.
3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության, ստեղծում է հանգստի գոտիներ:

Գյուղատնտեսության բնագավառում՝

1) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.
2) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին.
3) կազմակերպում է ազրարային կանոներին պահպանման աշխատանքները:

3. Կամավոր լիազորությունների իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և սույն կարգով:

4. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

5. Կամավոր լիազորությունների իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

6. Այն դեպքում , երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթերը, եթե դրանք առկա են:

7. Այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, նախաձեռնողը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեսշտ է ֆինանսական միջոցի չափը, անհրաժեշտության հիմնավորումը և դրա պատճառը, անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

8. Համայնքի ղեկավարի դիմումը և սույն կարգի 7-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր լիազորության իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր լիազորության իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.
2) կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

9. Եթե կամավոր լիազորության իրականացման նախաձեռնողը սույն կարգի 7-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 7-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և ավագանուն ուղղված դիմումը ներկայացնում է վերջինիս քննարկմանը:

10. Համայնքի ավագանին սույն կարգի 7-րդ կամ 9-րդ կետերում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր լիազորության իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցը քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր լիազորության իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

11. Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են ՝ կամավորլիազորության իրականացման լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր լիազորության իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

12. Համայնքի ղեկավարը զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման , հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով , որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամները, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչները, աշխատակազմի և համայնքային կամակերպությունների մասնագետները, ինչպես նաև համայնքի բնակիչները և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

13. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վերապահված այլ կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

14. Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկվում են համայնքի քաղաքացիների սոցիալ-տնտեսական վիճակն ուսումնասիրող մշտական գործող հանձնաժողովի կողմից կամավոր լիազորության իրականացման եզրակացության և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության հիմնավորման առկայության դեպքում:

15. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է հարյուր հազար դրամ: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարի

մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա), ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձնաց:

16. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան 2 անգամ՝ տարեկան ուսման վարձի 50%-ի չափով: Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

17. Սույն կարգով չնախատեսված կամավոր լիազորությունների իրականացումն արգելվում է:

Ավագանու անդամներ

1.Թադևոսյան Լևոն

2.Խաչատրյան Արմեն

3.Սարգսյան Տիգրան

4.Հերիքյան Արտակ

5.Միքայելյան Ավագ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 5-Ն

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով.

1.Հաստատել Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի

Ավագանու 2016 թվականի հունվարի 27-ի

Թիվ 5 – Ն որոշման

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ

## ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական, հողային օրենսդրության և այլ իրավական ակտերի համապատասխան սույն կանոնդրության և այլ իրավական ակտերի համապատասխան սույն կանոնադրությունը սահմանում է Քաղաքաշինական գործունեության ընթացակարգերը Տանձուտ համայնքում, քաղաքաշինական գործունեության սուբյեկտների (կառուցապատողներ, նախագիծ մշակողներ և շինարարություն իրականացնողներ) իրավասությունները և պարտականությունները:

## II ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

2. Տանձուտ համայնքի հողերի նպատակային և գործառնական նշանակությունները սահմանվում են համայնքի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականով:
3. Հողամասերի թույլատրված օգտագործումը սահմանվում է հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների և այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա:
4. Հողամասերը տրամադրվում են նպատակային և գործառական նշանակության հաշվառմամբ, թույլատրված օգտագործման նշումով.
   1) Առանց հրապարակային սակարկության
   2) Մրցույթով (աճուրդով)
5. Հողօգտագործողը պարտավոր է ապահովել հողամասի նկատմամբ իր իրավունքների պետական գրանցումը:

## III. ՀՈՂԸ ԱՌԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն

առանց մրցույթի (աճուրդի) տրամադրվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ նախատեսված դեպքերում:

7. Հողամասի տրամադրման հարցը քննարկվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ համայնքի ղեկավարին ուղղված դիմումի հիման վրա:

8. Դիմումին ընթացք է տրվում Տանձուտ գյուղապետարանի գործավարության կարգի համաձայն:

9. Անհրաժեշտ փաստաթղթերը բացակայելու դեպքում դիմումները եռօրյա ժամկետում ետ են վերադարձվում՝ նշելով դիմումների վերադարձման պատճառները և հիմքերը:

10. Հողամասի տրամադրման մասին եզրակացությունը տրվում է գյուղապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի կողմից:

11. Հողամասի սահմանները որոշելուց, հողամասի հատակագիծը և նկարագրությունը կազմելուց հետո նշված փաստաթղթերի հիման վրա կազմվում է հողամասի տրամադրման գործ:

12. Հողամասի տրամադրման գործն ընդգրկում է՝

1) դիմում,

2) հողամասի հատակագիծը,

3) հողամասի նկարագրությունը,

4) ֆիզիկական անձի անձնագրի պատճենը, իրավաբանական անձի (կազմակերպության) պետական գրանցման մասին վկայականի պատճենը,

5) գործին առնչվող այլ փաստաթղթեր:

13. Հողամասի տրամադրման գործը կազմվում է մեկ օրինակից:

14. Հողամասի տրամադրման գործի հիման վրա գյուղապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետը նախապատրաստում է համայնքի ղեկավարի որոշման նախագիծը:

15. Հողամասի տրամադրման մասին համայնքի ղեկավարի որոշման կայացումից հետո որոշման նախագիծը՝ բոլոր անհրաժեշտ նշագրումներով, նախագծի հիմքերով, այդ թվում՝ հողամասի տրամադրման գործի հետ միասին պահվում են գյուղապետարանի աշխատակազմի արխիվում:

16. Հողամասի տրամադրման մասին որոշումը ստանալուց հետո դիմողը կնքում է հողամասի վարձակալության (օտարման) պայմանագիր համայնքի ղեկավարի հետ:

17. Հողամասի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման պարտավորությունը կրում է համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանված հողօգտագործողը (ֆիզիկական կամ

իրավաբանական անձը:

## IV. ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ (ԱՃՈՒՐԴՈՎ) ՏՐԱՄԱԴՐԵԼԸ

18 Տանձուտ համայնքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցութային ստարվում՝ աճուրդային կարգով Տանձուտ համայնքի ղեկավարի՝ մրցույթ (աճուրդ) հայտարարելու մասին որոշման հիման վրա, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1-րդ,61-րդ,67-70-րդ,77-80րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-465 րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 22-28 րդ և 43-59-րդկետերով:

19. Հողամասերը մրցույթով վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու և աճուրդային կարգով օտարելու կազմակերպական աշխատանքներն իրականացնում է Տանձուտ համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարումը կազմակերպող և իրականացնող աճուրդային հանձնաժողովը:

## V. ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

20. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118 րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հողհատկացման հիմքերի վերականգնման գործին ընթացք է տրվում շահագրգիռ իրավաբանական անձի Տանձուտ համայնքի ղեկավարին ուղղված դիմումի հիման վրա:

21. Հողհատկացման հիմքերի վերականգնման ընթացակարգով դիմողին տրամադրվում է օրենքի և իրավական ակտերի պահանջներին համապատասխան կառուցված շինություններով զբաղեցված և դրանց սպասարկման համար անհրաժեշտ այն հողամասը, որը (կամ նրա մի մասը) հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր տրամադրել հրապարակային սակարկությունների միջոցով

22. Դիմումի հիմնավորվածության մասին եզրակացություն է տալիս աշխատակազմի համապատասխան մասնագետը: Դիմումը հիմնավորված չլինելու դեպքում դիմողին տրվում է համապատասխան գրավոր պարզաբանում:
23. Հիմք ընդունելով աշխատակազմի համապատասխան մասնագետի եզրակացությունը, դիմումի քննարկման հետագա ընթացքը կարգավորվում է սույն կանոնադրության «Հողն առանց հրապարակային սակարկության տրամադրելու կարգի» կանոններով:

## VI. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

24. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ և 22-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1473-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն Տանձուտ համայնքում ճարտարապետահատակագծային առաջադրանք տալիս է համայնքի ղեկավարը:
25. Առաջադրանք ստանալու համար կառուցապատողը համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ՝ լրացված Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1473-Ն որոշմամբ հաստատված ձևաթղթի համապատասխան:
26. Գոյություն ունեցող շենքում լրացուցիչ հարկ (այդ թվում մանսարդ) կառուցելու, կցակառույց կամ այլ բարելավում, վերափոխություն իրականացնելու համար նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին անհրաժեշտ է կցել շենքի կայունության, ամրության և հուսալիության վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը:
27. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող գույքի ձևափոխման նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին կցվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետական լիազորված մարմնի համաձայնությունը կամ մասնագիտական եզրակացությունը:
28. Իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II կատեգորիայի դասակարգում ունեցող օբյեկտների համար առաջադրանքը տրամադրում է կամ մերժում՝ կառուցապատողի հայտի ընդունման օրվանից 10-օրյա ժամկետում, III կատեգորիայի օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում, իսկ մերժման դեպքում՝ նշում մերժման պատճառները:
29. Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ կատարել մերժված հայտում ու ներկայացվող փաստաթղթերում և կրկին հայտ ներկայացնել իրավասու մարմնին:

30. Իրավասու մարմինը քննարկում է կրկնակի հայտը և 10 օրվա ընթացքում կառուցապատողին տալիս առաջադրանք:
31. Հայտի մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

## VII ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ

32. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շինարարության թույլտվություն պահանջող բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերը Տանձուտ համայնքում համաձայնեցվում են համայնքի ղեկավարի հետ:
33. Համաձայնեցման ներկայացվող նախագծին կցվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 711Ն որոշմանը համապատասխան իրականացված փորձաքննության եզրակացությունը (բացառությամբ սահմանված դեպքերում և կարգով նախագծողի գրավոր երաշխավորագրով թողարկված նախագծերի):
34. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն սահմանված դեպքերում կառուցապատողը պարտավոր է ապահովել նախատեսվող գործունեության բնապահպանական պետական փորձաքննության անցկացում, ներկայացնելով համապատասխան եզրակացություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու և մեղմացնելու մասին:
35. Համաձայնեցման ներկայացվող նախագծի փաթեթում ներառվում է շինարարական աշխատանքների կատարման ժամանակացույցը.
36. Նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են դրանք ներկայացնելու օրվանից՝
1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում.
2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում.
37. Դիտողություններով վերադարձված նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են, դրանք կրկին ներկայացնելու օրվանից՝ սույն կարգի 37-րդ կետի
1-ին ենթակետում նշված օբյեկտների մասով՝ եռօրյա ժամկետում
սույն կարգի 37-րդ կետի 2-րդ ենթակետում նշված օբյեկտների մասով՝
7-օրյա ժամկետում.

## VIII. ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

38. Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի «Ոչ հիմնական շինություններիտեղադրման կարգը հաստատելու մասին» թիվ 896 որոշմամբ:

39. Ոչ հիմնական շինությունների նախագծային փաստաթղթերը մշակվում են հողամասի տրամադրման մասին որոշման հիման վրա, որով ամրագրվում են շինությունների տարածականչափերը, հողամասի վրա դրանց տեղադրման պայմանները, ճարտարապետական լուծումներին ներկայացվող պահանջները՝ ելնելով տեղանքի և (կամ) օբյեկտի առանձնահատկությունից:

40. Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը՝ նրա կողմից համաձայնեցված և պատվիրատուի կողմից հաստատված նախագծի հիման վրա:

## IX. ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

41. Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոխելիս որպես պատվիրատու հանդես է գալիս տվյալ շինության սեփականատերը կամ համապատասխան լիազորություններով օժտված անձը:

42. Շենքի, շինության կամ դրա մի հատվածի գործառական նշանակության փոփոխումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88 որոշմամբ սահմանվածկարգով՝ պատվիրատուի հայտի հիման վրա Տանձուտ համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որոնց համար չի պահանջվում շինարարության թույլտվություն) համաձայն մշակված, համաձայնեցված և հաստատված նախագծով:

## X. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

43. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող:

44. Կառուցապատողի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հողային

քաղաքացիական, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ փաստաթղթերով:

45. Տանձուտ համայնքում շինարարություն իրականացնելիս շրջակա միջավայրի անվտանգության, սանիտարական պաշտպանության, կառուցապատվող հողերի պահպանության խնդիրների ապահովելու նպատակով, կառուցապատողը պարտավոր է կատարել հետևյալ կանոնները.

1) փողոցներին հարող հողամասերում կառուցապատում իրականացնելիս մայթերը ժամանակավոր սարքավորել անվտանգ հետիոտն շարժումն ապահովելու համար անհրաժեշտ հարթակներով, բազրիքներով ու ծածկոցներով:

2) կառուցապատողը պարտավոր է իրականացնել հողի բերրի շերտի հանումը, պահպանումն ու օգտագործումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականիսեպտեմբերի 8

ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-

ի N 1622 Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի մարտի 12-

ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1396

Ն որոշման համաձայն:

## XI. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

46. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների իրավունքները և պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:

47. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների պատասխանատվությունը կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և իրավական այլ ակտերով:

## XII. ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

48. **Տանձուտ** համայնքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությունն իրականացվում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» թիվ 660 որոշման համաձայն և սույն կարգով.

49. **Տանձուտ** համայնքի տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին հասարակայնության իրազեկում է **Տանձուտ** համայնքի ղեկավարը:

50. Իրազեկումն իրականացվում է՝

1) զանգվածային լրատվության միջոցներով.
2) համայնքային ինտերնետային կայքէջում տեղադրմամբ.
3) հասարակական քննարկումներով.

51. Քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի հրապարակման ու ցուցադրման ժամկետը սահմանվում է 15 օր:

52. Հասարակայնության ներկայացուցիչները սահմանված ժամկետում նամակով և այլ իրավական ակտերով հիմնավորված դիտողությունները, առաջարկությունները, ինչպես նաև հրապարակված նախագծերի վերաբերյալ սեփական միջոցներով կատարված անկախ փորձաքննության եզրակացությունները գրավոր ներկայացնում են **Տանձուտ** գյուղապետարանի աշխատակազմին:

53. Համայնքի ղեկավարը հասարակայնության ներկայացուցիչների (դիտողությունների և առաջարկությունների հեղինակների) մասնակցությամբ դիտողությունների ու առաջարկությունների ուսումնասիրությունից և վերլուծությունից հետո 3-օրյա ժամկետում ընդունում է համապատասխան որոշում քաղաքաշինական ծրագիրը (կամ նախագիծը) համաձայնեցնելու, լրամշակման համար վերադարձնելու կամ մերժելու մասին:

## XIII. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

54. Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որևէ շինարարական գործունեություն իրականացնելու իրավունքը.

55. Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը

55. Առանց շինարարության թույլտվության կարող են կառուցվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգումներով օբյեկտները (շինարարական աշխատանքները) եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործմանը և (կամ) չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

57. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և քանդման աշխատանք կարող է իրականացվել բացառապես նախագծով որոշված տարածքի սահմաններում:

58. Շինարարության (քանդման) թույլտվությունը Տանձուտ համայնքում տալիս է Տանձուտ համայնքի ղեկավարը «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» թիվ 91 որոշմամբ սահմանված կարգով:

59. Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով համաձայնեցնելուց և կառուցապատողի կողմից դրանք հաստատելուց հետո՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ե» կետով նախատեսված ժամկետով:

60. Շինարարության տևողությունը կարող է երկարաձգվել օրենքով սահմանված կարգով:

61. Շինարարության թույլտվությունը տրվում է տվյալ օբյեկտի ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հետ միաժամանակ, իսկ նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, եթե կառուցապատողը դրանց հաստատման վերաբերյալ գրավոր առարկություն չի ներկայացնում համաձայնեցնող մարմնին:

62 Տանձուտ համայնքում շինարարության (քանդման) թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարվում է համայնքի բյուջե:

63. Թույլտվության տեսակներն են՝

1) նոր կառուցվող օբյեկտների, շենքերի և շինությունների, շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարման թույլտվությունը,

2) գոյություն ունեցող օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման աշխատանքների կատարման թույլտվությունը,
3) գոյություն ունեցող օբյեկտների քանդման թույլտվությունը:
64. Կառուցապատողը շինարարության թույլտվություն ստանալու համար գյուղապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
1) դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված ձև N 1),
2) օբյեկտի շինարարության համար՝ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերը, որտեղ նշված են շինարարության տևողության ժամկետը, իսկ փուլերով մշակվող նախագծի դեպքում՝ միջանկյալ հաստատվող փուլի նախագծային փաստաթղթերը:
65. Դիմումում նշվում են՝
1) օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,
2) օրենքով սահմանված դեպքերում՝ օբյեկտի նախագծային փաստաթղթերը մշակած և սահմանված կարգով փորձաքննություն անցկացրած տնտեսավարող սուբյեկտների՝ համապատասխան գործունեության իրականացման լիցենզիաների համարները, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի երաշխավորագիրը:
66. Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
67. Սեփականատերը կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձը քանդման թույլտվություն ստանալու համար գյուղապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
1) դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված ձև N 2),
2) անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը և սեփականատիրոջ կողմից սահմանված կարգով տրված լիազորագիրը (եթե դիմումը ներկայացնում է լիազորված անձը):
68. Դիմումում նշվում են՝
1) քանդվող օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,
2) քանդման նպատակը,
3) քանդվող օբյեկտի հիմնական ցուցանիշները:
69. Թույլտվություն տվող իրավասու մարմինը կառուցապատողի (սեփականատիրոջ) ներկայացրած փաստաթղթերը քննարկում է և ընդունում որոշում թույլտվության կամ մերժման մասին՝ դիմումը ստանալու օրվանից ոչ ավելի, քան 5 օրվա ընթացքում:

70. Շինարարության և քանդման թույլտվությունները ձևակերպվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված N 3 և N 4 ձևերի:

71. Շինարարության թույլտվության հետ միասին կառուցապատողին է տրվում շինարարության վարման մատյան, որը դրոշմակնքում է թույլտվություն տվող իրավասու մարմինը:

72. Եթե նոր կառուցվող օբյեկտի շինարարության իրականացումը հնարավոր չէ առանց գոյություն ունեցող օբյեկտի (օբյեկտների) քանդման, ապա սեփականատիրոջը տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով հանդիսանում է նաև քանդման թույլտվություն:

73. Օբյեկտի փաստացի քանդումն ու նոր շինարարությունն իրականացվում են շինարարության թույլտվություն ստանալուց հետո ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված հերթականությամբ:

74. Այն դեպքում, երբ տեղանքի ճարտարապետական ուսումնասիրությունները առանց քանդման անհնարին են, ապա քանդման թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ միաժամանակ, մինչև շինարարության թույլտվություն ստանալը, քանդման թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջե վճարելուց հետո:

75. Եթե օբյեկտի քանդումը չի նախատեսում նոր օբյեկտի կառուցում, և (կամ) հաջորդ աշխատանքների իրականացման համար չի պահանջվում շինարարության թույլտվություն՝ ապա սեփականատիրոջը տրվում է քանդման թույլտվություն.

76. Համայնքի ղեկավարը տալիս է թույլտվություն կամ նաև մերժում է, (գրավոր հրապարակելով մերժման հիմքերի մասին) դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում.

77. Կրկնակի դիմելու և իրավասու մարմնի ներկայացրած պահանջները դիմողի կողմից կատարվելու դեպքում թույլտվության կամ մերժման մասին հարցը քննարկվում է ոչ ավելի, քան

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 7-օրյա ժամկետում.

78. Համայնքի ղեկավարի կողմից շինարարության (քանդման) թույլտվության տրամադրման կամ վերջինիս մերժման մասին կառուցապատողը տեղեկացվում է դիմումում նշված էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով:

79. Թույլտվության ձևակերպման օրվանից 2 տարվա ընթացքում թույլտվությամբ նախատեսված աշխատանքները չսկսելու դեպքում կառուցապատողը պարտավոր է դիմել թույլտվություն տվող իրավասու մարմնին կառուցապատման տեխնիկական պայմանների հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ տվյալներ և սույն կարգի համաձայն նոր թույլտվություն ստանալու համար:

80. Կառուցապատողը շինարարական (քանդման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ տեղեկացնում է Տանձուտի գյուղապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91որոշմամբ հաստատված N 5 ձևի, եթե թույլտվությամբ այլ ժամկետ նախատեսված չէ:

81. Կառուցապատողը շինարարության ընթացքում պարտավոր է 5 օրյա ժամկետում՝ սույն կարգի 80րդ կետում նշված մարմիններին տեղեկացնել շինարարության թույլտվության և (կամ) N5 ձևում նշված համապատասխան տեղեկանքի տվյալների փոփոխման մասին:

82. Նախագծային լուծումների՝ սահմանված կարգով փոփոխման դեպքում շինարարության թույլտվության մեջ կատարվում է գրառում:

## XIV. ՏԱՆՁՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

83. Տանձուտ համայնքում շինարարության ավարտը փաստագրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» թիվ 626Ն որոշմամբ սահմանված կարգով, նույն որոշմամբ հաստատված ձևի շինարարության շահագործման ակտի ձևակերպմամբ, նախագծով նախատեսված շինարարական և մոնտաժային աշխատանքների իրականացումից հետո:

84. Ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու նպատակով կառուցապատողը դիմում է համայնքի ղեկավարին՝ շահագործման ակտի ձևակերպման համար:

85. Դիմումին կցվում են՝

1) ընդունող հանձնաժողովի ակտը կամ եզրակացության ակտը.

2) երկկողմանի ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագործ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացություն-ները.

3) կատարողական փաստաթղթերի ցանկը.

4) ակտի ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:

86. Համայնքի ղեկավարը ներկայացված փաստաթղթերի հիման վրա ձևակերպում է շահագործման ակտը՝ դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում:

87. Կառուցապատողի ցանկությամբ ավարտական ակտը կարող է ձևակերպվել առանց նախագծով նախատեսված այնպիսի աշխատանքների իրականացման, որոնց համար ըստ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված կարգի չի պահանջվում շինարարության թույլտվություն.

88. Ինքնակամ կառուցված կամ նախագծային, շինարարական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված շենքերի և շինությունների շինարարության ավարտը ենթակա չէ փաստագրման:

89. Դիմումի մերժման դեպքում իրավասու մարմինը սույն կարգի 86-րդ կետով սահմանված ժամկետներում գրավոր տեղեկացնում է դիմողին՝ նշելով մերժման պատճառները, ընդ որում, մերժումը կարող է պատճառաբանվել միմիայն սույն կարգի 86-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

90. Իրավասու մարմնի առաջադրած պահանջները բավարարելու դեպքում շահագործման ակտը ձևակերպվում է կառուցապատողի կրկնակի դիմումը տալու օրվանից եռօրյա ժամկետում:

91. Շահագործման ակտը կազմվում է 4 օրինակից, որոնցից մեկը մնում է քաղաքաշինարարանում, մնացած օրինակը տրվում է կառուցապատողին, կադաստրին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային մարմնին:

## XV. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

92. Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում՝
1) հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ,
2) հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու նկատմամբ,
3) հողօգտագործման սահմանների և սահմանանիշերի պահպանման նկատմամբ,
4) հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ,
5) հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման նկատմամբ:
93. Համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջների խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

## XVI. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

94. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը վերահսկում է համայնքի վարչական տարածքում կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, քաղաքաշինական կանոնակարգության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը՝ կիրառելով վարչական պատասխանատվության միջոցներ:
95. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219.1 հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը քննում է շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու վերաբերյալ, շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում կառուցապատողը չավարտելու վերաբերյալ գործերը:

## XVII. ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

96. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի «Պետական քաղաքաշինական կադաստրի վարման և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 802 որոշմամբ սահմանված կարգով և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանմամբ պետական քաղաքաշինական կադաստրի վարումը և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգը **Տանձուտ** համայնքում կատարում է համայնքի ղեկավարը:

Ավագանու անդամներ՝

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]